ԱՎԱՆԴԱԿԱՆ ԲԺՇԿՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԶԵԿՈՒՅՑ

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԳԾՈՎ ՊՐՈՌԵԿՏՈՐԻ

Հաշվետվությունը կազմված է Որակի ապահովման և կրթության բարեփոխումների գծով պրոռեկտորի 2020-2025 թվականների երկարաժամկետ պլանավորման կարճաժամկետ գործողությունների 2020-2021 ուստարվա ժամանակահատվածի համար:

Զեկույցում ներկայացված են պլանով նախատեսված 7 չափանիշների համար նախատեսված կարճաժամկետ գործողությունները և համապատասխան հիմքերը:

Ներկայացնենք ըստ 7 չափանիշների կատարված աշխատանքները:

Ի. ԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Այս չափանիշի շրջանակում իրականացվել են հետևյալ բարեփոխումները.

Գործողություն 1. Ներդնել ԱԲՀ-ի գործունեության վրա ազդող ներքին և արտաքին գործոնների ուսումնասիրման պարբերաբար իրականացվող հստակ մեխանիզմներով և չափելի գործիքներով ամբողջական համակարգ:

Հաշվի առնելով այն, որ բուհերի գործունեության վրա էական ազդեցություն են թողնում արտաքին և ներքին միջավայրերի փոփոխությունները, Համալսարանի կառավարման գործընթացում կարևորվել է նրա վրա ազդող առանցքային գործոնների վերհանումը, ուսումնասիրությունն ու վերլուծությունը:

ԱԲՀ-ի ընդհանուր և կրթական գործունեության վրա ազդող գործոնների բացահայտման համար պարբերաբար իրականացվել են հարցումներ, վերլուծվել են արդյունքները, որոնք օգտագործվել են ինքնավերլուծության, որակի ապահովման գործընթացների բարելավման նպատակով:

ՈԱ հանձնաժողովի կողմից մշակված և գիտական խորհրդի կողմից հաստատված «Համալսարանի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրության համար կիրառվող մեթոդների և գործիքների ուղեցույց»-ի համաձայն **(Հավելված 1.1)** 2020-2021 ուստարում կազմակերպվել է ԱԲՀ-ի գործունեության վրա ազդող գործոնների ուսումնասիրություն և վերլուծություն:

(**Հիմք՝ Հավելված 1.2. Համալսարանի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ազդեցության վերլուծություն):**

Գործողություն 2. Ներդնել ռիսկերի բացահայտման և կառավարման համակարգ:

Հաշվետու ժամանակահատվածում ուսումնասիրվել են Հայաստանյան կրթական համակարգում ռիսկերի առաջացման և կառավարման միջոցառումները: Կոնկրետ ուսումնասիրվել են վերջին երեք տարիներին բուհերի ընդունելության վիճակագրական տվյալները՝ ՀՀ Գնահատման և թեստավորման կենտրոնի հրապարակումները (դիմորդների թիվը կտրուկ նվազել է, դիմորդների զգալի մասը առաջին և երկրորդ հայտով նշում են միայն պետական բուհերը: Այն դիմորդները, որոնք պետական բուհեր չեն կարողանում ընդունվել, նոր դիմում են մասնավորներին, որն էլ լուրջ ռիսկ է հանդիսանում ուսանողների հավաքագրմանժամանակ), ՀՀ ԿԳՄՍ նախարարության որոշումները, հրամանները և այլն: Արդյունքում մշակվել և շրջանառության մեջ է դրվել **ԱԲՀ «Ռիսկերի բացահայտման և կառավարման» ընթացակարգը (Հիմք՝ Հավելված 1.3.),** որի կիրառումը հնարավորություն կնձեռի ԱԲՀ-ին մշակել նպատակային և թիրախային միջոցառումների համալիր ծրագիր, հատկապես դիմորդների ընդունելության ժամանակ:

Գործողություն 3. Վերանայել վարչարարության ՈԱ մեխանիզմները՝ ապահովելով ՊԻԳԲ շրջափուլի ամբողջական իրականացումը:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և ներդրվել է ԱԲՀ-ի բոլոր ստորաբաժանումների համար պլանավորման և կատարողականի նոր ձևաչափ: Կազմակերպվել են սեմինարներ և քննարկումներ ստորաբաժանումների աշխատակիցների համար պլանավորման և կատարողականի նոր ձևաչափերի վերաբերյալ **(Հիմքեր՝ Հավելված 1.4. Պլանի ձևանմուշ, Հավելված 1.5. Հաշվետվության ձևանմուշ)**: Բոլոր ստորաբաժանումները մշակել և հաստատմանն են ներկայացրել 2020-2025 թվականների երկարաժամկետ

պլանները, որն իր մեջ ներառում է նաև կարճաժամկետ և միջնաժամկետ գործողությունների պլանավորում իրենց վերջնարդյունքներով: 2019-2020 ուստարվա ընթացքում կազմկերպվել են քննարկումներ և սեմինարներ ՈԱ գործընթացների ՊԻԳԲ շրջափուլի վերաբերյալ: Ամբիոնների վարիչներին և ստորաբաժանումների ղեկավարներին հանգամանորեն ներկայացվել իրականացվող գործընթացների ՊԻԳԲ շրջափուլի առանձնահատկությունները և արդյունավետությունը: Որպես արդյունք 2020-2021 ուստարվա կատարողական զեկույցները (հաշվետվությունները) բոլոր ստորաբաժանումները կներկայացնեն արդեն իսկ նոր ձևաչափով: Կատարողականների վերլուծությունները նախապես կքննարկվեն, կտրվեն գնահատականներ և հստակ հանձնարարականներ բարելավման նպատակով:

2. ԿՐԹԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

Այս չափանիշի շրջանակում իրականացվել են հետևյալ բարեփոխումները.

Գործողություն 1. Վերանայել դասավանդման և ուսումնառության մեթոդներին վերաբերող ապակենտրոնացված ընթացակարգերը՝ կիրառելով մեթոդների ընտրության միասնական քաղաքականություն:

Ռեկտորի **03.02.2020թ-ի N 356** հրամանի համաձայն ձևավորված ՄԿԾ-ի մշտադիտարկման և վերանայման աշխատանքային խմբի կողմից իրականացվել են արտասահմանյան (ՌԴ, Բելառուսի Հանրապետություն, Վրաստանի Հանրապետություն, Լատվիայի Հանրապետություն) առաջատար բուհերի փորձի ուսումնասիրություններ, կազմակերպվել են միջազգային և տեղական փորձագետների հետ առցանց հանդիպումներ և քննարկումներ: Աշխատանքների արդյունքները հնարավորություն ընձեռեցին ամբողջովին վերանայել ուսումնական գործընթացին առնչվող իրավական փաստաթղթերը: Վերանայվել են առարկայական դասընթացների ծրագրերը, ապահովելով դասավանդման և ուսումնառության մեթոդների կապն ուսումնառության վերջնարդյունքների և գնահատման մեթոդների հետ՝ ներդնելով ուսանողակենտրոն մոտեցումներ: Առարկայական դասընթացի նոր ծրագրերում ներառված է համապատասխան քարտեզագրումը: **(Հիմքեր՝ <u>Հավելված 2.1. «Վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման» կարգ, Հավելված 2.2. Առարկայական դասընթացի ծրագիր</u>)**:

Գործողություն 2. Կազմակերպել վերապատրաստումներ դասախոսական և ուսումնաօժանդակ կազմի համար:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և հաստատվել է պրոֆեսորադասախոսական և ուսումնաօժանդակ կազմի վերապատրաստման և որակավորման դասընթացների կազմակերպման ծրագիրը: Պլան-ժամանակացույցով նախատեսված դասախոսական կազմի համար մեկամսյա վերապատրաստումներն իրականացվել են 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակում պրոռեկտոր Ա.Գյոզալյանի և արտաքին փորձագետ՝ Կ.Վարդանայնի կողմից: Վերապատրաստումներին մասնակցել է ընդհանուր 70 դասախոս, ավարտից հետո բոլոր մասնակիցներին տրվել են հավաստագրեր: Անհրաժեշտությունից ելնելով ՈԱ և ԿԲ աշխատանքների գծով պրոռեկտորի կողմից կազմակերպվել են նաև ամբիոնային հանդիպումներ, քննարկումներ և սեմինարներ: Հանդիպում-քննարկումները արձանագրվել են ամբիոնային նիստերում **(Հիմքեր՝ <u>Հավելված 2.3. «Վերապատրաստման ծրագիր», Հավելված 2.4. Մասնակիցների գրանցաթերթիկ</u>)**:

Վարչական անձնակազմի վերապատրաստումները պլանավորվում է կազմակերպել 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակում: Նախատեսվում է հրավիրել միջազգային փորձագետներ՝ Բելգիայից,Բելառուսի Հանարպետությունից և Ռուսաստանի Դաշնությունից:

Գործողություն 3. Վերանայել կրեդիտների հաշվարկման, բաշխման և կուտակման գործընթացները՝ իրազեկելով ներքին բոլոր շահակիցներին:

Հաշվետու ժամանակահատվածում դեկանի հետ միասին վերանայվել է Համալսարանում գործող կրեդիտային համակարգը կանոնակարգող փաստաթղթերը: Փաստաթղթերի լրամշակման գործընթացին մասնակցել են նաև ուսանողները և ամբիոնների դասախոսները (**Հիմք՝ Հավելված 2.5. Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ**): Ինչպես ամբողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում տիրող նոր կորոնավիրոսի համավարակի պատճառով 2020-2021 ուստարվա երկրորդ կիսամյակի ընթացքում դասախոսական կազմի շրջանում կազմակերպվել են վերապատրաստումներ հեռավար եղանակով՝ կրեդիտների հաշվարկման, բաշխման և կուտակման գործընթացների վերաբերյալ իրազեկվածության բարձրացման նպատակով:

Գործողություն 4. Մշակել ՄԿԾ-ների մշտադիտարկման և գնահատման կայուն մեխանիզմներ՝ ըստ ՊԻԳԲ շրջափուլի՝ ընդլայնելով ՄՈՒՀ-ի արտաքին շահակիցների ներգրավվածությունը ՄԿԾ-ների (վերա) մշակման գործընթացներում:

ՄԿԾ-ի վերանայման նպատակով դեռ 2019-2020 ուստարում ձևավորված աշխատանքային խմբի կողմից լրամշակվել և գիտական խորհրդի հաստատմանն էր ներկայացվել «ՄԿԾ-ի մշտադիտարկման և վերանայման ընթացակարգը», այն դարձել է կիրառման համար ավելի պրակտիկ և մատչելի:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել են ներքին շահակիցների շրջանում անցկացվող հարցումների կանոնակարգերը և հարցաթերթիկները: Հարցումները պլանավորվում է կազմակերպել 2021-2022 ուստարվա ընթացքում (**Հիմք՝ Հավելված 2.6. Հարցումների կազմակերպման կանոնակարգեր և հարցաթերթիկներ**):

Գործողություն 5. Մշակել բենչմարքինգի իրականացման ընդհանուր մեթոդաբանություն և արդյունքների կիրառման մեխանիզմներ:

Դեկանի հետ համատեղ մշակվել և գիտխորհրդի կողմից հաստատվել է բենչմարքինգի իրականացման ընդհանուր մեթոդաբանություն և արդյունքների կիրառման մեխանիզմներին առնչվող փաստաթուղթ (**Հիմք՝ Հավելված 2.7. Բենչմարքինգի իրականացման քաղաքականություն և ընթացակարգ**):

Համալսարանի և Բելառուսի Հանրապետության բժշկական բուհերի հետ նախապես պայմանավորվածության համաձայն հաշվետու ժամանակահատվածում կազմակերպվել է 3 հանդիպում-քննարկում: (**Հիմք՝ Հավելված 2.8. ՄԿԾ մշտադիտարկման և վերանայման աշխատանքային խմբի զեկույցը**):

Գործողություն 6. Ներդնել ուսանողների պորտֆոլիոն որպես գնահատման միջոց՝ պարբերաբար մշտադիտարկելով ուսանողների ձեռքբերած հմտությունները և ուսումնառության ընթացքում առկա խնդիրները:

Հաշվետու ժամանակահատվածից մեկնարկել են նոր վերանայված երկու ՄԿԾ-ը: Մասնագիտական ամբիոնների ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում մշակվել է միայն պրակտիկաների պորտֆոլիոն: Պորտֆոլիան որպես ուսանողների գնահատման միջոց՝ ամբողջական կներդրվի 2021-2022 ուստարվա ընթացքում՝ ըստ տվյալ տարվա ուսումնական պլանով նախատեսված պրակտիկաների:

Գործողություն 7. Բարելավել ավարտական ատեստավորման քննությունները՝ հնարավորություն ընձեռելով ուսանողներին ցուցադրելու ձեռքի հմտությունները:

ՀՀ ԿԳՄՍ նախարարության /N 05/11.1/7233-2021թ./ գրության համաձայն 2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակում վերանայվեց «ԱԲՀ Շրջանավարտների ամփոփիչ ատեստավորման» 05.03.2018թ-ի կարգը **(Հիմք՝ Հավելված 2.9. Ամփոփիչ ատեստավորման կարգ):** 2020-2021 ուստարվա ամփոփիչ ատեստավորումը Նոր կորոնավիրուսի կանխարգելման նպատակով ևս կազմակերպվեց հեռավար եղանակով (ZOOM հարթակում), որը, ցավոք, սահմանափակեց շրջանավարտների ձեռքի հմտությունների ցուցադրման հնարավորությունը (**Հիմք՝ Հավելված 2.10. Հանձնաժողովի հաշվետվություն):**

Սահմանված վերջնարդյունքներն առցանց կրթության պայմաններում ապահովելու նպատակով ներդրվել է վիրտուալ պացիենտի գաղափարը, վերանայվել են քննական հարցերը և այլն:

Վերլուծվել են ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովի նախագահների վերջին երեք տարվա հաշվետվությունները:

Գործողություն 8. Բարելավել դասալսումների և դրանց քննարկումների մեխանիզմները:

Հաշվետու ժամանակահատվածում դասալսումները և քննարկումները իրականացվել են գործող նոր կարգի հիման վրա: Ամբիոնների կողմից ներկայացված դասալսումների և քննարկումների արդյունքները կուսումնասիրվեն և ամփոփ վերլուծությունն ու առաջարկությունները կներկայացվեն ԱԲՀ-ի գիտական խորհրդի քննարկմանը 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում **(Հիմք՝ Հավելված 2.11. Կենսաքիմիայի ամբիոնի դասալսման օրինակ):** Այս գործընթացը պահանջում է պարբերականություն, իսկ արդյունքների վերլուծությունը հնարավորություն կընձեռի համալսարանի ղեկավարությանը ճիշտ պլանավորել գալիք տարվա ուսումնական գործընթացը:

Գործողություն 9. Ստեղծել դասախոսների վերապատրաստման և մասնագիտական հմտությունների կատարելագործման մեխանիզմներ և տրամադրել համապատասխան ֆինանսական հատկացումներ:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և հաստատվել է վերապատրաստումների կազմակերպման կանոնակարգը և ծրագիրը: Իրականացվել են միայն ընդհանուր վերապատրաստումներ՝ «Բարձրագույն և հետբուհական համակարգի հիմնախնդիրները և որակի ապահովումը» խորագրով: Բոլոր մասնակիցներին համալսարանի կողմից շնորհվել են հավաստագրեր: Աշխատանքներն այս ուղղությամբ շարունակվում են և գտնվում են համալսարանի ղեկավարության անմիջական վերահսկողության ներքո:

Գործողություն 10. Ընդլայնել համագործակցությունը տեղական և արտասահմանյան բժշկական բուհերի և կազմակերպությունների հետ, կնքել համապատասխան պայմանագրեր:

Համագործակցության աշխատանքներ են ընթանում տեղական և արտասահմանյան բժշկական բուհերի և կազմակերպությունների հետ: Կոնկրետ հաշվետու ժամանակահատվածում կնքվել է 2 համագործակցության հուշագիր **(Հիմք՝ Հավելված 2.12. Պայմանագրեր):** Ընթացքի մեջ է ևս 2-ը՝ Ռուսաստանի Դաշնության և Բելառուսի Հանրապետության առաջատար բուհերի հետ: Պլանավորվում է 2021-2022 ուստարվա ընթացքում կազմակերպել պաշտոնական հանդիպումներ և կնքել համագործակցության հուշագրեր:

Գործողություն 11. Կազմակերպել տարբեր միջոցառումներ օտարերկրյա դիմորդների ընդունելության հոսքն ապահովելու ուղղությամբ:

Օտարերկրյա դիմորդների ընդունելության հոսքն ապահովելու ուղղությամբ իրականացվել և իրականացվում են տարբեր միջոցառումներ, մասնավորապես՝ Համալսարանի գործ-ընկերների հետ համատեղ նկարահանվել է 2 ճանաչողական տեսահոլովակ, որոնք տեղադրվել են սոցիալական ցանցերում, տպագրվել է 2 տեղեկատվական բուկլետ: Համագործակցող գործընկերները արտասահմանում կազմակերպում են տարատեսակ միջոցառումներ (հանդիպումներ պոտենցիալ դիմորդների հետ, տեսահոլովակների ցուցադրություններ և բացատրական աշխատանքներ):

Դիմորդների հավաքագրման աշխատանքներին անմիջական մասնակցություն ունի նաև ԱԲՀ-ի արտաքին կապերի բաժինը:

3. ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

Գործողություն 1. Բարելավել ԱԲՀ գրադարանային ֆոնդը՝ ֆինանսական միջոցներ հատկացնելով անգլալեզու մասնագիտական գրականության ձեռքբերմանը:

Հաշվետու ժամանակահատվածում ԱԲՀ-ի ռեկտորի անմիջական նախաձեռնությամբ գրադարանավարը մասնակցել է Ազգային գրադարանի կողմից կազմակերպված վերապատրաստումներին: Արդյունքում Ազգային գրադարանի հետ կնքվել է պայմանագիր, առ այն, որ ԱԲՀ-ն ընդգրկվել է միջազգային գրադարանային բազայում և բաժանորդագրվել է միջազգային գրադարանային տեղեկատվական համակարգում: Այսուհետ համալսարանի դասախոսները և ուսանողները կարող են գրադարանի ընթերցասրահի ցանկացած արտասահմանյան մասնագիտական և ոչ մասնագիտական գրականությունից օգտվել անվճար: Ընդհանուր առմամբ ամբողջ ֆինանսական ծախսերը հոգացել է համալսարանը (վերապատրաստման և տարեկան բաժանորդագրություն):

Գործողություն 2. Կատարելագործել ԱԲՀ փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության կառավարման համակարգերը՝ ներդնելով միասնական էլեկտրոնային համակարգ:

ԱԲՀ փաստաթղթաշրջանառության և տեղեկատվության կառավարման միասնական էլեկտրոնային համակարգի ներդրման աշխատանքները դեռ ընթացքի մեջ են:

Գործողություն 3. Բազմազանեցնել ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների որակի գնահատման մեխանիզմները՝ շարունակաբար վերլուծելով արդյունքները և պլանավորելով համապատասխան բարելավումներ:

Ուսանողներին և դասավանդողներին տրամադրվող ռեսուրսների որակի գնահատման մեխանիզմների բարելավման աշխատանքներ իրականացվում են պարբերաբար: Հաշվետու ժամանակահատվածում նոր կորոնավիրուսի համավարակի պատճառով ներքին շահակիցների շրջանում հարցումներ Համալսարանի առկա ռեսուրսներից և տրամադրվող ծառայություններից չի իրականացվել: Այն նախատեսվում է կազմակերպել 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակում: Իրականացվել են միայն հեռավար ուսուցման և դասընթացների արդյունավետության, ինչպես նաև ստացած կրթությունից շրջանավարտների բավարարվածության վերաբերյալ հարցումներ:

4. ՈՒՍԱՆՈՂԱԿԵՆՏՐՈՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Գործողություն 1.2. Ապահովել ուսանողների ակտիվ և արդյունավետ մասնակցությունը ԱԲՀ-ի կառավարմանը: Ապահովել ուսանողների մասնակցությունը ուսումնական ծրագրերի իրականացման, մշտադիտարկման և վերահսկողության գործընթացում:

Համալսարանի կառավարման գործընթացում ուսանողներն ունեն իրենց կայուն տեղն ու դիրքը: Ուսանողները ներգրավված են Համալսարանում գործող բոլոր հանձնաժողովներում, մասնակցել և մասնակցում են թե կառավարման և թե ուսումնական հարցերին վերաբերվող բոլոր քննարկումներին: 2020թ. ամռանը ԱԲՀ-ի ուսանողները մասնակցեցին ՈԱԱԿ-ի կողմից բժշկական բուհերի հետ կազմակերպված հանդիպմանը՝ նվիրված առցանց եղանակով իրականացվող դասընթացներին: Որո՞նք են առցանց կրթության դրական և բացասական կողմերը, ի՞նչ է կորցրել և ի՞նչ է շահել ուսանողն առցանց կրթության ամիսների ընթացքում. այս և այլ հարցեր էին հանդիպման օրակարգում: Ուսանողներն առաջարկեցին ապագայում համատեղել առցանց և լսարանային դասերը՝ դրանք անցկացնելով փոքր խմբերով:

Կազմակերպվեցին և իրականացվեցին 2 առցանց հարցումներ՝ պարզելու առցանց դասընթացների որակից ուսանողների բավարարվածությունը, վերհանելու առավելություններն ու թերությունները:

Գործողություն 3. Իրականացնել միջոցառումներ ուսանողների գեղագիտական դաստիարակությունը զարգացնելու նպատակով:

Նոր կորոնավիրուսի համավարակի տարածումը ամբողջ աշխարհում լուրջ խնդիրներ առաջացրեց մեզ համար նաև հաշվետու ժամանակահատվածում: Համալսարանի ուսանողների մեծ մասը չկարողացան վերադառնալ Հայաստան, այդ իսկ պատճառով նախապես ուսանողական խորհրդի պլանավորված մկիջոցառումները չիրականացվեցին: Սակայն ԱԲՀ-ի գործընկեր Կամփուս Ինթերնեշընալի և Համալսարանի ղեկավարների նախաձեռնությամբ կազմակերպվեց ավարտական դիպլոմների շնորհման հանդիսավոր միջոցառում: Իսկ այն շրջանավարտները, ովքեր Հայաստանում չէին, տեսակապով մասնակցեցին այդ միջոցառմանը:

Գործողություն 4. Ապահովել ուսանողների իրազեկվածության աստիճանն իրենց իրավունքների և պարտականությունների իմացության ոլորտում:

Համալսարանում ուսանողների իրազեկվածության ապահովումը իրենց իրավունքների և պարտականությունների վերաբերյալ կրում է պարտադիր բնույթ: Ամբիոնները, դեկանատը պարբերաբար կազմակերպում են հանդիպումներ ինչպես անհատական, այնպես էլ խմբային: Բոլոր ուսանողները համացանցում ունեն ձևավորված խմբեր և բոլոր խնդիրները քննարկվում

են կուրսի ավագների և դասախոսների հետ: Անհրաժեշտության դեպքում քննարկումները կազմակերպվում են դեկանի, պրոռեկտորի կամ ուսումնական մասի վարիչի հետ:

2020-2021 ուստարվա 2-րդ կիսամյակի ընթացքում դեկանի, ուսխորհրդի ներկայացուցչի, որակի ապահովման առաջատար մասնագետի կողմից վերանայվել է ԱԲՀ-ի անընդհատ և ինտեգրացված կրթական ծրագրով ուսումնառող ուսանողների համար նախատեսված ուղեցույցը, որը գործում էր 2018-ից: Վերանայման անհրաժեշտությունը պայմանավորված էր համալսարանի գործունեությունը կանոնակարգող որոշ փաստաթղթերի վերանայմամբ, որոշ տվյալների արդիականացմամբ, որոնք ընդգրկված էին գործող Ուսանողի ուղեցույցում:

5. ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ

Գործողություն 5. Մշակել և կիրառության մեջ դնել հաշվետվողականության կարգ, և հաշվետվություններում ապահովել վերլուծական մոտեցումը:

Հաշվետու ժամանակահատվածում մշակվել և կիրառության մեջ է դրվել ստորաբաժանումների գործունեության պլանավորման և կատարողականի նոր ձևաչափ: 2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում կկատարվի բոլոր ստորաբաժանումների կատարողականների վերլուծություն և կներկայացվի գիտական խորհրդի քննարկմանը:

6. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու ժամանակահատվածում համալսարանի կողմից հետազոտական աշխատանքներ չեն կազմակերպվել: Պլանավորվում է աշխատանքները սկսել 2021-2022 ուստարվանից:

7. ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆԵՐՔԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Գործողություն 1. Վերանայել ԱԲՀ-ի ՈՆԱ քաղաքականությունն ու նպատակները՝ կանոնադրական գործունեությունը և ռազմավարական նպատակները համապատասխանեցնելով վերջիններիս:

Որակի ապահովման քաղաքականությունը գործնականում իրականացվում է հաստատության ռազմավարական պլանին համապատասխան՝ իր տարաբնույթ գործընթացներով, բոլոր ստորաբաժանումների և շահակիցների մասնակցությամբ: Ինստիտուցիոնալ հավատարմագրումից հետո 2019թ. ԱԲՀ-ն վերանայել է իր առաքելությունը, տեսլականն ու ռազմավարական ծրագիրը: Վերաձևակերպվել է առաքելությունը՝ սահմանելով հանրային պատասխանատվության ու միջազգային աշխատաշուկայում մրցունակ մասնագետների պատրաստման գործում բուհի հետաքրքրությունները:

Համալսարանի առաքելությունից բխող նպատակներում հստակ ներկայացվում է բուհի գործունեության տարբեր ոլորտներում նրա շահակիցների ներգրավվածությունը, նրանց դերակատարությունը ՈԱ գործընթացներում:

Հաշվետու ժամանակահատվածում ՈԱ առաջատար մասնագետի հետ համատեղ շարունակվել են Ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման աշխատանքները: Վերանայվել և վերանայվում են համալսարանում գործող ներքին իրավանորմատիվային փաստաթղթերը:

2020-2021 ուստարվա ընթացքում վերանայվել են ԱԲՀ-ի ՈՆԱ քաղաքականությունը և ընթացակարգերը:

Նշենք, որ դասախոսները, վարչակազմը ընդգրկվել են ՈԱ գործընթացները կանոնակարգող անհրաժեշտ փաստաթղթերի մշակմանը կամ նախագծերի վերաբերյալ առաջարկությունների տրամադրմանը («Ուսանողների գիտելիքների ստուգման և գնահատման կարգ», «ԱԲՀ-ում դասալսումների կազմակերպման, անցկացման և գնահատման կանոնակարգ», ԱԲՀ-ի ուսանողների ուսումնաարտադրական պրակտիկաների կազմակերպման և անցկացման կանոնակարգ):

ՈՆԱ քաղաքականության և ընթացակարգերի արդյունավետության գնահատումը պլանավորվում է իրականացնել 2021-2022 ուստարվա ընթացքում, որից հետո կներկայացվի շահակիցների կարծիքների վերլուծական զեկույց:

Գործողություն 2. Մշակել ՈԱ ուղղված քաղաքականության իրականացման անհրաժեշտ ընթացակարգեր, դրանց գնահատման և արդյունավետության չափման մեխանիզմներ՝ բարելավելով ՈՆԱ համակարգը և մեխանիզմները:

Սովորաբար, ՈԱ քաղաքականությունը գնահատվում է որակի ապահովման համապատասխան գործընթացների (կրթական ծրագրեր, դասախոսական կազմ, ուսանողների գնահատում, ենթակառուցվածքներ և ռեսուրսներ, տեղեկատվական համակարգեր, հանրային ներգրավում) համար պատասխանատու մարմինների, ստորաբաժանումների կատարողականների, ինքնավերլուծությունների, հաշվետվությունների քննարկումներով, աուդիտի հաշվետվությունների, փորձագիտական եզրակացությունների, որակական հետազոտությունների, վերլուծությունների հիման վրա: Գնահատման արդյունքում ձևավորվում են վերանայման, բարելավման առաջարկություններ:

Այս գործողությունը իրականացվել է գործողություն 1-ի հետ: Մշակվում են ՈՆԱ համակարգին առնչվող անհրաժեշտ ընթացակարգեր քաղաքականության արդյունավետության գնահատման ուղղությամբ:

Գործողություն 3. Մշակել հետադարձ կապի առավել արդյունավետ մեխանիզմներ:

ԱԲՀ-ում գործում է ներքին և արտաքին շահակիցների հետադարձ կապի քաղաքականություն. ներքին շահակիցների խնդիրները քննարկվում են կառավարման մարմիններում, յուրաքանչյուր կիսամյակի քննաշրջանի արդյունքներն ամփոփվում են ամբիոնների նիստերում, գիտական խորհուրդներում և ռեկտորատի նիստերում, քննարկվում են նաև ընթացիկ ստուգումների արդյունքները:

ԱԲՀ-ն իր ներքին և արտաքին շահակիցներին օբյեկտիվ տեղեկատվության տրամադրման միջոցով ձգտում է ամրապնդել բուհի և շահակիցների միջև կապը, բարձրացնել կրթական, գիտական և այլ ծառայությունների որակը, բուհի վարկանիշը պոտենցիալ շահակիցների շրջանում:

Կիրառվում են շահակիցների տեղեկացվածության և հաշվետվողականության ապահովման մի քանի մեխանիզմներ՝

- Ֆակուլտետների և այլ կառուցվածքային ստորաբաժանումների գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները բուհի ղեկավարությանը:
- Համալսարանի գործունեության վերաբերյալ տարեկան հաշվետվությունները, որտեղ ամփոփվում են տվյալ ուստարում ուսումնական, գիտահետազոտական ու վարչական

կառույցների գործունեության հիմնական արդյունքները: Այն ներկայացվում է Գիտխորհրդին և տեղադրվում բուհի պաշտոնական կայքում:

- 2018-2019 ուստարվանից բուհում ներդրված ուսանողների առաջադիմության և շարժի, ինչպես նաև ուսումնական այլ գործընթացների վերաբերյալ տեղեկատվությունն ապահովող «Կրեդիտային համակարգ» էլեկտրոնային ծրագիրը:
- Բուհում բոլոր գործընթացները կանոնակարգող փաստաթղթերի՝ կանոնակարգերի և ընթացակարգերի, գիտխորհրդի, ռեկտորատի արձանագրությունների ու որոշումների հասանելիությունը բուհի աշխատակիցներին՝ թղթային և էլեկտրոնային տարբերակով:
- ԱԲՀ-ի ֆեյսբուքյան էջում լուսաբանվող միջոցառումները, հարցազրույցները, ինչպես նաև տեղադրված հայտարարությունները, ուսանողական կյանքին վերաբերող նորությունները:
- info@utm.am էլեկտրոնային փոստի միջոցով հետադարձ կապի ապահովում:
- Համալսարանի գործունեության մասին տեղեկատվության և թափանցիկության միջոց են նաև օրենքով սահմանված կարգով պետական տարբեր մարմիններին ներկայացվող ֆինանսատնտեսական հաշվետվությունները:

Այնուամենայնիվ, պետք է նշենք, որ ինստիտուցիոնալ հավատարմագրման փորձագիտական զեկույցում որպես թույլ կողմ է արձանագրվել շահակիցներից հետադարձ կապի ապահովման մեխանիզմների ոչ լիարժեք կիրառումը, և նրանց թույլ ներգրավվածությունը որակի ապահովման գործընթացներում:

Այս առումով, հաշվետու ժամանակահատվածում վերանայվել է «**Ներքին և արտաքին շահակիցների հետադարձ կապի քաղաքականությունը»,** որը հիմնականում վերաբերում էր շահակիցներից ստացվող հետադարձ կապի մեխանիզմներին ու գործիքներրին, հարցումների անցկացման մեթոդաբանությանը: Այն ներառում էր նաև ԱԲՀ-ում որպես որակի ապահովման գործիքներ կիրառվող հարցումների համար մշակված հարցաթերթիկները:

Հաշվի առնելով նաև այն, որ Համալսարանի շահակիցների հետ հետադարձ կապի ապահովման համար անհրաժեշտ է մշտապես ապահովել բուհի գործունեության վերաբերյալ տեղեկատվության տարածումը նրանց շրջանում, ինչպես նաև հավաստի տվյալների հիման վրա որոշումների կայացման նպատակով տվյալների համակարգված հավաքագրումը, նշված քաղաքականությունը ներառել է Համալսարանում շահակիցների տեղեկատվությամբ ապահովման մեխանիզմներն ու մեթոդները, նրանց հետ կապի հաստատման մեխանիզմներն ու գործիքները:

Վերանայման արդյունքում «Ներքին և արտաքին շահակիցների հետադարձ կապի քաղաքականություն» փաստաթուղթը վերանվանվել է՝ «Ներքին և արտաքին շահակիցների տեղեկատվության ապահովման և հետադարձ կապի քաղաքականություն»:

Արդյունավետության գնահատումը պլանավորվում է կազմակերպել 2021-2022 ուստարվա ընթացքում:

Գործողություն 4. Ապահովել ՈԱ գործընթացում ընդգրկված անձնակազմի պարբերական վերապատրաստման դասընթացների իրականացումը:

Հաշվետու ժամանակահատվածում ՈԱ գործընթացում ընդգրկված աշխատակիցները որևէ վերապատրաստման չեն մասնակցել: Նշենք, որ վերջին վերապատրաստումը, որին մասնակցել են ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտորը և ՈԱ առաջատար մասնագետը «Որակի ապահովման

ներբուհական համակարգի հիմնախնդիրները և մարտահրավերները» խորագրով միջազգային աշխատաժողովն էր՝ 24.06.-25.06.2019թ.:

ՈԱԱԿ հիմնադրամի կողմից պարբերաբար կազմակերպվել են հանդիպում- քննարկումներ ՄԿԾ-ների որակի ապահովման և բարելավման գործընթացներին, հեռավար ուսուցմանն առնչվող թեմաներով: Հատկապես արտակարգ դրության մեկնարկից ի վեր առավել սերտ է դարձել ՈԱԱԿ-ի և Համալսարանի համագործակցությունը: ՈԱԱԿ-ի առցանց խորհրդատվությունների, մշակած և հրապարակած ընդհանուր և ոլորտային ուղենիշները օգնել են մեր համալսարանին նոր իրավիճակում ի հայտ եկած խնդիրները հաղթահարելու գործում:

Գործողություն 9. Մշակել տրամադրված մարդկային, նյութական և ֆինանսական ռեսուրսների համապատասխանության և արդյունավետության գնահատման մեխանիզմ-ները՝ գնահատելով որակի ներքին ապահովման գործընթացների իրականացման նպատակով բուհի տրամադրված ռեսուրսների բավարարությունը:

Բուհը տրամադրում է անհրաժեշտ մարդկային, նյութատեխնիկական ռեսուրսներ Որակի ապահովման գործընթացների իրականացման, որակի մշակույթի կայացման համար:

ՈԱ գործընթացներում կարևոր դերակատարություն ունի ԱԲՀ-ի Գիտական խորհուրդը, որը հաստատում է ՈԱ քաղաքականությունը, ընթացակարգերը, քննարկում է ընթացիկ զեկույցները, տարեկան հաշվետվությունները և առաջարկվող բարելավումների միջոցառումները:

ՈԱ գործընթացների իրականացման համար տրամադրվող մարդկային, ֆինանսական, ժամանակային և նյութատեխնիկական ռեսուրսները հնարավորություն են ընձեռել դիտարկվող ժամանակահատվածում (2020-2021թթ.) պլանավորել, իրականացնել մի շարք աշխատանքներ և վերափոխումներ, մասնավորապես՝

1. Կատարվել է Համալսարանի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրություն և համեմատական վերլուծություն, որն ընդգրկել է 1991-2020թթ.:
2. Կատարվել է ՈԱ գործընթացներում արտաքին շահակիցների ներգրավվածության վերլուծություն:
3. Իրականացվել է Համալսարանի SWOT վերլուծություն, որն ընդգրկում է՝ ռազմավարական կառավարում, ուսումնական գործընթաց և մարդկային ռեսուրսների կառավարում ոլորտները:
4. Իրականացվել է ստացած կրթությունից բավարարվածության հարցումներ շրջանավարտների շրջանում: Վերլուծության արդյունքները կքննարկվեն արդեն նոր՝ 2021-2022 ուսումնական տարում:

2021-2022 ուստարվա առաջին կիսամյակի ընթացքում Համալսարանի ստորաբաժանումների տարեկան կատարողականների վերլուծության արդյունքում կմշակվի բարելավման պլան՝ կարճաժամկետ կամ միջնաժամկետ:

Հավելվածներ

1.	Հավելված 1.1	Համալսարանի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների ուսումնասիրության համար կիրառվող մեթոդների և գործիքների ուղեցույց
2.	Հավելված 1.2	Համալսարանի գործունեության վրա ազդող արտաքին գործոնների

		ազդեցության վերլուծություն
3.	Հավելված 1.3	ԱԲՀ ռիսկերի բացահայտման և կառավարման ընթացակարգը
4.	Հավելված 1.4	Պլանի ձևանմուշ
5.	Հավելված 1.5	Հաշվետվության ձևանմուշ
6.	Հավելված 2.1	Վերջնարդյունքներին համապատասխան դասավանդման, ուսումնառության և գնահատման կարգ
7.	Հավելված 2.2	Առարկայական դասընթացի ծրագիր
8.	Հավելված 2.3	Վերապատրաստման ծրագիր
9.	Հավելված 2.4	Մասնակիցների գրանցաթերթիկ
10.	Հավելված 2.5	Կրեդիտային համակարգով ուսումնական գործընթացի կազմակերպման կարգ
11.	Հավելված 2.6	Հարցումների կազմակերպման կանոնակարգեր և հարցաթերթիկներ
12.	Հավելված 2.7	Բենչմարքինգի իրականացման քաղաքականություն և ընթացակարգ
13.	Հավելված 2.8	ՄԿԾ մշտադիտարկման և վերանայման աշխատանքային խմբի զեկույցը
14.	Հավելված 2.9	Ամփոփիչ ատեստավորման կարգ
15.	Հավելված 2.10	Հանձնաժողովի հաշվետվություն
16.	Հավելված 2.11	Կենսաքիմիայի ամբիոնի դասալսման օրինակ
17.	Հավելված 2.12	Պայմանագրեր

ՈԱ և ԿԲ գծով պրոռեկտոր՝ _____ Ա.Գյոզալյան